№ 161 Օգոստոսի 29 (Սեպտեմբերի 10) 1881 Օգոստոսի 29 (Սեպտեմբերի 10) № 161

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թերթս դրվում են միայն ամբողջական մէջ։

Ստորագրությունները կընդունվեն ուղղվելի։

Редакція «Мшака».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Ցայտագրումներն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտագրության գները հետեւեալն է.
Իւրաքանչիւր յտողին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հետեւանքը ինչ կը լինի։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց խնդիր։ Անգլիա։ Ամերիկա։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մի պատասխան։

ՀԵՏԵՒԱՆՔԸ ԻՆՉ ԿԸ ԼԻՆԻ

—

Հայերը գանգատվում են որ այլակրօն հայերը իրանց հայ չեն կամենում համարել։ Ի հարկէ նրանք շատ վատ են անում, որ փոխելով կրօնը, հրաժարվում են և ազգութիւնից։ Բայց եթէ մենք կամենում ենք համոզել մեր այլակրօն եղբայրներին, որ հայ մնան, որ իրանց հայ համարեն, չը նայելով որ կրօնը փոխել են,— միթէ նը-բանց ծեծելով, նրանց ջարդելով այդ նպատակին կարող ենք հասնել։ Անշխկաւակն, գրանով նրանք կը հեռանան, կը զզուին հայութենից։ Միթէ կարելի է մէկին իր ազգութիւնը սիրել տալ, ծեծելով նրան, կողոպտելով նրա ունեցած չնչնցածը։

Հայ ամբոխը և հայ ինտելիգենցիայի մի մաս համոզված են որ չէ կարելի հայ լինել լուսաւորչական եկեղեցուց դուրս, որ այլակրօն հայը հայ չէ։ Շատ լաւ, ընդունենք և այս միտքը, ընդունենք որ այդ ուղիղ է, ուրեմն պէտք է աշխատենք ա-ստարանական հային, կաթոլիկ հային, մահմեդական հային՝ կրկին լուսաւորչական դարձնել։ Բայց միթէ այդ նպատակին կարելի է հասնել ծեծելով, ջարդելով, հալածելով այլակրօն եղբօրը.... Չէ՞ որ նա, ընդհակառակն, աւելի էլ կատի մեզ, ուրեմն հեռացեալ աւելի կը հեռանայ իրան տանջողներից։ Անենք թէ մենք հա-մոզվեցանք որ լուսաւորչականութենից դուրս չը կայ փրկութիւն ամէն հայի համար։ Բայց միթէ չենք հասկանում որ ոչ մի կրօն, ուրեմն և լուսաւորչականութիւն, չէ կարելի սիրելի դարձնել, տարածելով նրան ոչ թէ համոզմունքի միջոցով, այլ ծեծի և բռնութեան միջոցով։ Կարելի է, միթէ մէկին սիրելի դառնալ, ծեծելով նրան։

Դուք կամենում էք ձեզ մեռեցնել ձեզանից անջատված այլակրօն հայերին, բայց ձեր վարմունքով աւելի էլ հեռացնում էք նրանց ձեզանից։ Երբ այդ տեսակ վայրենի լոգիկային հետեւում է ամբոխը,— այդ մեզ չէ զարմացնում։ Նա տգէտ է։ Բայց ի՞նչ պէտք է ասենք մի յայտնի ինտելիգենցիայի մասին, որ նոյն լոգիկայի պաշտպան է հանդիսանում։

Թող ընթերցողը ինքն գտնի մի բացատրութիւն այդ անմիտ երեւոյթին, որ յատուկ է մեր ինտելիգենցիայի մի մասին։

Ի՞նչ է այդ երեւոյթի պատճառը. մտաւոր ագքատութիւն, թէ չարամտութիւն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱԼԵՔՍԱՆԴՐԻՊՈԼԻՑ մեզ գրում են։ «Օգոստոսի 15-ին, Աստուածածնի օրը, մի խումբ ա-լէքսանդրապոլցի օրիորդների դրդված լինելով քաղաքին ինտելիգենցիային պատկանող մի քանի անհատներից, յարձակվեցան հայ-բողբոջականների աղօթատան վրա, ջարդեցին ա-ղօթատան դռները, մտան ներսը, և այնտեղ էլ ինչ որ պատահեց սկսեցին ջարդել։ Յարձակվեցան հայ-ստանեայցականների մի քանի տների վրա էլ, չտեղին ծեծեցին, առանց ջոկելու կին, մարդ, երեխայ, յաջողացին նրանց տներից այլ և այլ գոյքեր։ Պոլիցիան միջամտելով, հա-զիւ հազ հանգստացրեց խռնակիչներին։ Ամբոխի մարդիկ դարձեալ աւելի գութ ցոյց տուեցին և չատերը համոզում էին օրիկաներին չը շարունակել իրանց անմիտ գործը։ բայց մի քա-նի անձինք, որոնք իրանց ինտելիգենցիային պատկանած են համարում, յորդորում էին ամ-բոխը չարունակել գործը։» Այս տխրալի անցքերի մասին խմբագրութիւնը տացաւ մի քանի ընդարձակ նամակներ։

—

ՕՐԴՈՒԻԲԱԹԻՑ մեզ գրում են։ «Մեր գաւառի Ագա գիւղի հայ բնակիչները ցանկանում են ազատվել մի հարուստ մարդուց, որ ամբի է բերում գիւղին, այլ և այլ հարստահարութիւններ, բռնութիւններ և անարդարական գործեր գործելով։ Ուզում են խնդիրք տալ վարչութիւնը որ այդ մարդուն հեռացնեն իրանց գիւղից։»

—

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՅԻՑ որ այս օրերս քա-ղաքի մէջ հայ եկեղեցու մէջ երկու քահանաներ միմեանց մէջ կռուելով, սկսեցին միմեանց զար-կել և մերս քարերից քաշել։ Մի երրորդ քահա-նայ ստիպվեցաւ միջամտել կռուի մէջ և վերջ տուեց խայտառակութեանը, բաժանելով մենք միւսից կռուող տէր-հայրերին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

—

Վիէննայի «Journal d'Orient» վերջին № 35 մէջ գտնում ենք հետեւեալ յօդուածը Հայոց խնդրի վրա „Ինքնավարութիւն“ (Autonomie) վերնագրով։

Տգիտութիւնը, նորատիրութիւնը, վնասելու ցանկութիւնը թելադրում են մամուլի մի քանի օրգաններին ամենահայասող զրպարտութիւններ տալ Հայերի ձգտումների վերաբերութեամբ։ Հայերի կրած տանջանքները թիւրքաց Հայաստանում, մի անվիճելի իրողութիւն է. վերանորոգութիւններ տալու անհրաժեշտութիւնը մեզանում չը ջնջաբերական հաւասարութեամբ։ Այս մտքով և հայ ազգը, մի կողմից աչք տնկելով իր անցած կրօնական և հայրենասիրական փառաւոր յիշատակարանների վրա, և միւս կողմից հրաժարվելով մոլեռանդութիւնից և կեղծ ազգասիրութիւնից, հրաւիրում են մտաւորապէս հասզարգվել եւրոպական ընտանիքի հետ, ընդունել սրանց հանրակեցութեան պայմանները, որով միայն կարող է մնալ ազգ, պատուազգաց և արժանաւոր անդամ մարդկութեան։ Այս բանը այս ազգերիս զրոյի համար սպիտակ գոյն ունի, բայց երեցականների համար սև է, սև է և առատաշնորհ պատրիարք Ազարեանի համար որ, երկի հայոց ազգը հրատարակելով կրօնական, ինքը չէ կարող հասկանալ և ոչ իր լսողներին հասկացնել թէ ինչ ասել է Հայաստան։ Ինքնօրէն վարչութիւն։ Եւ ահա հայ-հռոմէական պատրիարքի սպիտակ գոյնը մեր աչքումը սև է, որովհետև այդպիսի մարդիկը չեն ծառայում հասարակութեան, այլ ընդդէմ հասարակութեան. սերտել ձեւանալ կրօնը և սարքանով երգել հաւատացեալներին փրկութիւն նշանակում է մարմել բուն կրօնի գոյը նոյն հաւատացեալներից և փոխանակ արձակելու կապել և կաշկանդել։ Գոյն կրօնական ազգի որդիքը, մեր սանմանաւորական ժողովի էֆէնդիները. մեր սրբազան և վեհափայլ իշխանները, փակվելով իրանց վեհավայր պալատներում, ծառայելով իրանց նենգաւոր որոյտամտութեան, եթէ կրօնական լինէին, կը ներէին իրանց այսօր ուրանալ ազգի հարկաւոր բարիքը, մարմել առողջամիտ գիտնականաց առաջարկութիւնը իրանց թիւրաւոր զաւակների համար. կարող էին դրանք հալածել Ներսէսներին և հայոց փառաւոր թագուն հանդէսը ձեռնարկել։ Ահա այս տողերիս մէջ երեցականները սև գոյն են տեսնում, որովհետև ազգայիների մեղքերը ցոյց են տալիս օտարին և չեն կարդում։

Այսպէս երբ մտաւորական մեռելութիւնը թագաւորում է մի ազգի մէջ, երբ դադարում է մանացութիւնների սթափեցուցիչ ծառայումը,— դադարում է և հասարակական մտքի ազատ շարժումը։ այնուհետև չարն ու բարին, անմեանց չը ջնջաբերական հաւասարութեամբ։ Այս մտքով և հայ ազգը, մի կողմից աչք տնկելով իր անցած կրօնական և հայրենասիրական փառաւոր յիշատակարանների վրա, և միւս կողմից հրաժարվելով մոլեռանդութիւնից և կեղծ ազգասիրութիւնից, հրաւիրում են մտաւորապէս հասզարգվել եւրոպական ընտանիքի հետ, ընդունել սրանց հանրակեցութեան պայմանները, որով միայն կարող է մնալ ազգ, պատուազգաց և արժանաւոր անդամ մարդկութեան։ Այս բանը այս տողերիս գրողի համար սպիտակ գոյն ունի, բայց երեցականների համար սև է, սև է և առատաշնորհ պատրիարք Ազարեանի համար որ, երկի հայոց ազգը հրատարակելով կրօնական, ինքը չէ կարող հասկանալ և ոչ իր լսողներին հասկացնել թէ ինչ ասել է Հայաստան։ Ինքնօրէն վարչութիւն։ Եւ ահա հայ-հռոմէական պատրիարքի սպիտակ գոյնը մեր աչքումը սև է, որովհետև այդպիսի մարդիկը չեն ծառայում հասարակութեան, այլ ընդդէմ հասարակութեան. սերտել ձեւանալ կրօնը և սարքանով երգել հաւատացեալներին փրկութիւն նշանակում է մարմել բուն կրօնի գոյը նոյն հաւատացեալներից և փոխանակ արձակելու կապել և կաշկանդել։ Գոյն կրօնական ազգի որդիքը, մեր սանմանաւորական ժողովի էֆէնդիները. մեր սրբազան և վեհափայլ իշխանները, փակվելով իրանց վեհավայր պալատներում, ծառայելով իրանց նենգաւոր որոյտամտութեան, եթէ կրօնական լինէին, կը ներէին իրանց այսօր ուրանալ ազգի հարկաւոր բարիքը, մարմել առողջամիտ գիտնականաց առաջարկութիւնը իրանց թիւրաւոր զաւակների համար. կարող էին դրանք հալածել Ներսէսներին և հայոց փառաւոր թագուն հանդէսը ձեռնարկել։ Ահա այս տողերիս մէջ երեցականները սև գոյն են տեսնում, որովհետև ազգայիների մեղքերը ցոյց են տալիս օտարին և չեն կարդում։

Այսպէս երբ մտաւորական մեռելութիւնը թագաւորում է մի ազգի մէջ, երբ դադարում է մանացութիւնների սթափեցուցիչ ծառայումը,— դադարում է և հասարակական մտքի ազատ շարժումը։ այնուհետև չարն ու բարին, ան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

—

Խոնարհաբար խնդրում ենք «Մշակ» լրագրի հիւրասիրութիւնը մեր այս սակաւատող գրութեան համար։

Ամարանցից վերադառնալով Մոսկվա, կարդացի «Փորձ» ամսագրի վերջին տետրակը (№ V—VI), ուր պ. Երիցեանը տրատարակել է մի նոր յօդուած «Դարձեալ Ս. Նազարեանցի գործունէութեան մասին» որպէս պատասխան կամ հերքումն իմ չարդրութեան «Հրապարակասոս ձայնս»։ Պէտք է ասել, որ նրա այս նոր յօդուածը իր գլխաւոր կէտերով արտատպութիւն է առաջին յօդուածի նոյն առարկայի մասին, և այստեղ, որպէս և այնտեղ, հասարկական հարցուխնդիրը որ Երիցեանը քննում է իր լեզուի երկրորդութեամբ և ոչ խոնական զատողութիւններով։ Եւ այստեղ նա չատ նման է այն մարդուներին կամ մեր ժամանակի սքօլաստիկոսին, որ ուսումնական կապոցը ձեռին ճանապարհ է ընկնում, որ յեսոյ զրան քանայ, բայց վերջի-վերջոյ, հանում է իր սկզբնական կէտին նոյն իսկ կապոցով,—և կապոցը մնում է անլուծանելի։ Այս է պատճառը, մեր կարծիքով, որ ամենը պարանը ստէպ ստէպ հարցնում է. «Ինչ է Նազարեանցը. ինչպէս կարող է մի բան մի և նոյն ժամանակը և սև և սպիտակ լինել», և երբէք չէ հանում զոյա ներքին պատճառներին։ Մենք պ. Երիցեանի երկրորդ գրուածը, որին արդէն պատասխանել ենք հանգամանօրէն «Հրապարակասոս Ձայնում», մի կողմ դնելով, առնում ենք այդ գրուածի գլխաւոր խօսքը «Մի բան մի և նոյն ժամանակը չէ կարող և սև և սպիտակ լինել»։ Մենք կամենում ենք այդ խօսքը վերլուծել և ցոյց տալ որ երիցականները գործնական կանքում անընդունակ են եղել սեր սպիտակից ջոկել, որով և կը պարզվի նոյն Երիցեանի վերջին յօդուածի արժանաւորութիւնը։

Սև և սպիտակ գոյներ, որպէս բնական երեւոյթ, ամէն երեխայ կարող է որոշել, ինչպէս որոշում է պ. Երիցեանը. բայց որպէս բարոյական ապատրութիւն չատ անգամ մեռում է անորոշ և չափաւոր մարդի համար. այդ կախված է անհատի մտաւոր և հոգեոր հասկացողութիւնից։ Իրաւի, գիտութեան ասպարէզում մենք պատահում ենք այնպիսի մարդերի, որ հնացած ձեւերի փոփոխութիւնը համարում են ամենամեծ մոլորութիւն. բայց թէ դրանք փոքր մի չափաւորութիւն իրանց մտասիրաչուութիւնը և պարզ աչքով նայելին ամենօրեայ փորձերի վրա, կը տեսնէին որ կեանքը իր ներքին և արտաքին ձեւերով միշտ գտնվում է փոփոխութեան մէջ։ Այս զանազան կէտերից ահա առաջ է գալիս սեր և սպիտակի չփոխութիւնը, որովհետև ապատրութիւնը, որ բերում է կեանքը երկու ներհակ ծայրերում կանգնած մարդերի վրա, միշտ կը լինի զանազան. նրա համար, որի աչքում կեանքը է որպէս մի անշարժ և քարացած բան, պահպանելի կը լինի միւսի հայեցողութիւնը, որի աչքում այդ կեանքը և մի բոպէ չէ դադարում, այլ անընդհատ ձգտողութեամբ շարժվում է, նորոգվում է և մշակվում։ Ահա մի և նոյն բանը մի և նոյն ժամանակ և սև է և սպիտակ, միայ դնելով այն բարոյական վիճակին, որով տարբերվում է մարդը։ Այլ ևս օրինակ. մի քանի հայերի համար մեր այսօրեան ազգային ինտերեսները ոչինչ օգտաւէտ խորհուրդ չունեն դրանց աչքում, միայն այն բանը խորհուրդ ունի, որ ներկայի մէջ չէ, այլ կամ հնութեան խանդակներում կամ գալոց օրերում։ Նման հին հնդկական բրահմանների փիլոսոփայութեան, դրանք քննում են մեր անցածը ոչ որպէս մեր կեանքին չարութիւն կամ բարութիւն բերող պատճառը, այլ որպէս մի անհասանելի գաղանիք, որի բանալին նախախնամութեան ձեռին է. այսպէս դրանց աչքում է և ապագան, որ ոչ թէ մեր զարգացման հետեւանքն է, այլ որպէս վարձ կամ պատիժ, նոյն նախախնամութիւնից նշանակված. այս պատճառով և իրանց հոգեները ընծայում են կամ անցածի դիակներին կամ հոգու ապագայ յիշատակներին։ Ներկան հոգեեր չը պիտի ունենայ. ներկան միայն ժամանակաւոր քաւարան է և աւելի ոչինչ։ Այսպիսի մարդիկ, սպիտակ գոյն տալով իրանց զարձուկութեան, հրատարակվում են ընտրեալ, ամենընտրեալ հերոս։ Բայց ահա այդ սպիտակ գոյնը փոխվում է սև այն մարդերի աչքում, որոնք այլ հասկացողութեան տէր են և առանձնաշնորհ ընտրեալներից հանելով նրանց բեհեզը և գահերեցութիւնը, բոլոր իրանց ուշադրությունը դարձնում են ներկայ մարդու վրա և ասում են, Եւ ներկայ կեանքի մասին խօսողները, և ներկայի վիճակը քննողները այն ընտրեալներից պակաս հերոս չեն, այլ մանաւանդ գերազանց, որովհետև սոքա են մաքառում այն անողոքելի ճակատագրի դէմ, որ անխորտակելի ոյժերով ընկել է այս և այն ազգի գլխին. այն ազգը որ ներկայի համար սակաւ է մտածում, կամ ամենևին չէ մտածում, յայտ է որ յետ է ընկնում ուրիշներից. և մի ազգ—այդ մեզ ցուցանում է բնութեան պատմութիւնը—եթէ սասսկի յետ է մընում և միւսը սասսկի առաջ է գնում, նոյն բնութեան կարգը պատժում է յետ կացողին և զրաւորը կուլ է տալիս դրան համմատ ինքնագոյութեան մաքառման օրէնքին։ Ահա ինչ որ մէկի աչքում սև է, միւսի աչքում երեւում է սպիտակ, թէև գատողութեան նիւթը նոյն է։ Այլ ևս օրինակ. կրօնը, որպէս դրան մեկնում են յեսագէմ մարդիկ, հեշտութեամբ փոխվում է կրօնամոլութեան, իսկ կրօնամոլութեամբ զբաղածները երբէք չեն հանել մի կատարեալ և գիտակից հայրենասիրութեան. կրօնի զգացմունքը, եթէ դա չէ անցել իր չափից, բարի է և լուսաւորիչ. բայց չափից դուրս գալով, դառնում է կրակ ու պատիժ իր խոստովանողների վրա, այլ ևս քաղում է իր հետ զէպի կորուստ և ամենայն քաղաքակրթութիւն. կրօնը մեր կեանքի երեւոյթներից միմին է և ոչ դրա ամբողջ պարունակութիւնը. կրօնի գիտութեանը հասնելու համար հարկաւոր է ծանօթութիւն և միւս գիտութիւնների հետ, որովհետև գիտութիւնները կապակից են